

**ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի 26-րդ ամենամյա նստաշրջանի  
նախօրեին անցկացված  
ԵԱՀԿ քաղաքացիական հասարակության զուգահեռ ֆորումի բանաձև**

**Մինսկ, Բելառուս  
4 հուլիսի 2017թ.**

Մենք՝ Մինսկում անցկացվող ԵԱՀԿ քաղաքացիական հասարակության զուգահեռ ֆորումի մասնակիցներս<sup>1</sup>, ներկայացնելով ամբողջ ԵԱՀԿ-ի տարածաշրջանում՝ Վիեննայից դեպի արևելք և արևմուտք, գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, հավաքվել ենք ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի 26-րդ ամենամյա նստաշրջանի նախօրեին՝ քննարկելու «Հելսինկյան սկզբունքների» և ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների իրականացումը խոչընդոտող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ միջազգային հանրության ռազմավարությունները:

Մենք ընդունում ենք սույն բանաձևը, որն ամփոփում է մեր վերլուծությունները և եզրակացությունները՝ հասցեագրելով այն ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի անդամներին, ԵԱՀԿ մասնակից պետություններին և ԵԱՀԿ քաղաքական մարմինների և կառույցների ներկայացուցիչներին: Որպես քաղաքացիական հասարակության դերակատարներ՝ հայտնում ենք մեր պատրաստակամությունը շարունակելու ակտիվ կերպով մասնակցել «Հելսինկյան սկզբունքների» ոգով համապարփակ անվտանգության հայեցակարգի իրականացմանը և վճռականորեն պայքարել ԵԱՀԿ ողջ տարածաշրջաններում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամբողջական իրացման, ժողովրդավարության և օրենքի գերակայության հաստատման համար:

Հավատացած ենք, որ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը և ԵԱՀԿ մասնակից պետությունների խորհրդարաններն առանցքային դեր են կատարում ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարումը և «Հելսինկյան սկզբունքների» ամրապնդումը երաշխավորելու գործում: «Հելսինկյան սկզբունքների» իրականացման ներկա ընթացքը խիստ խնդրահարույց է, և մենք կոչ ենք անում դրանում ներգրավված բոլոր դերակատարներին կրկնապատկել իրենց ջանքերը՝ ԵԱՀԿ տարածաշրջանի համապարփակ անվտանգության համակարգը կործանումից փրկելու համար:

Սույն բանաձևում հատուկ ուշադրություն է դարձվում ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի այս նստաշրջանն ընդունող երկրում՝ Բելառուսում տիրող իրավիճակին, և ներկայացվում են մի շարք հստակ հանձնարարականներ: Կարելի է մեծապես բարելավել ԵԱՀԿ շրջանակներում Բելառուսի կողմից ստանձնած մի շարք պարտավորությունների կատարումը և ԵԱՀԿ մեխանիզմների ու

<sup>1</sup> 2017թ. հուլիսի 4-ին Մինսկում կայացած ԵԱՀԿ քաղաքացիական հասարակության զուգահեռ ֆորումը համատեղ կազմակերպել են Բելառուսի առաջատար ՀԿ-ները («Վիասնա» իրավապաշտպան կենտրոն, Բելառուսի Հելսինկյան կոմիտե, «Ժողովրդավարական ՀԿ-ների վեհաժողով», Բելառուսի լրագրողների միավորում, «Իրավական փոխակերպման կենտրոն» և «Բարիս Զվոզկատի Բելառուսի Մարդու իրավունքների տուն») և «Քաղաքացիական համերաշխության հարթակ» կազմակերպությունը, որը հանդիսանում է ԵԱՀԿ ողջ տարածքում ՀԿ-ները և ԵԱՀԿ երեսուներից ավելի մասնակից պետություններից գրեթե ինստուն անդամ միավորող կառույց:

ընթացակարգերի հարցերով համագործակցությունը, ուստիս խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել այս հարցերին:

## ԵԱՀԿ ՏԱՐԱԾԱՉՐՋԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2014 թվականից մինչ այսօր ծավալվող իրադարձությունները հանգեցրել են ԵԱՀԿ տարածաշրջանում համապարփակ անվտանգության ռազմաքաղաքական և մարդկային չափման մեխանիզմների իրականացման ընթացքի վիճակի վատթարացմանը Հելսինկյան համաձայնության ստորագրումից ի վեր: Ի լրումն Ղրիմը Ռուսաստանի Դաշնությանը միացնելու հետևանքով Եվրոպայում սկիզբ առած ճգնաժամին և Ուկրաինայի արևելյան հատվածում ընթացող ավերիչ պատերազմին՝ այսօր մենք ականատես ենք լինում ահաբեկչության և բռնի ծայրահեղականության դեմ պայքարելու և «փախստականների մեծ հոսքով պայմանավորված ճգնաժամը» հաղթահարելու պատրվակով ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան Եվրոպայի երկրների կառավարման մոտեցումներում քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների նկատմամբ խիստ սահմանափակող միտումների աճին, պոպուլիստական, մեկուսացվածության և ազգայնականության գաղափարախոսությունների տարածմանը, ինչը հանգեցրել է օրենքի գերակայության սկզբունքի, ժողովրդավարական ինստիտուտների և միջազգային համագործակցության խաթարմանը, միջազգային մակարդակով տարածված կոռուպցիայի հետևանքով միջկառավարական կազմակերպությունների թուլացմանը և հետզհետե ավելի ու ավելի տարածվող ապատեղեկատվության, քարոզչության, ատելություն պարունակող խոսքի և համացանցային գրաքննության հետևանքով ազատ արտահայտվելու իրավունքի և տեղեկատվության ազատության խաթարմանը: ԵԱՀԿ ողջ տարածաշրջանի տարբեր երկրներում վերջերս ընդունված օրենքներից շատերով խախտվում են միջազգային ճանաչում ունեցող մարդու իրավունքների չափանիշները, և շատ դեպքերում իրենց իրավունքները պաշտպանելու նվազագույն կարողություն ունեցող մարդիկ հայտնվում են այն մարդկանց շարքերում, ովքեր առավել մեծ հավանականությամբ տուժում են նման խախտումներից: Ոմանց կողմից «կոշտ անվտանգություն» կոչված ԵԱՀԿ մարդկային չափանիշի մեխանիզմի նշանակության նվազեցման վտանգին բախվելով՝ այժմ առավել քան երբևէ կարևոր է «Համապարփակ անվտանգության Հելսինկյան հայեցակարգի» հիման վրա դիմագրավել ԵԱՀԿ-ի տարածաշրջանում և համաշխարհային մակարդակով առկա այդ խնդիրներին:

Մեր առաջնահերթ մտահոգության պատճառը շարունակում է մնալ ԵԱՀԿ տարածաշրջանում անվտանգության և մարդու իրավունքների ոլորտում արձանագրված շարունակական ճգնաժամը՝ **Ուկրաինայի արևելյան հատվածում ընթացող պատերազմի և Ղրիմի բռնազավթման** համատեքստում: ԵԱՀԿ պատմության մեջ Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների ամենակոպիտ այս խախտումը արդյունավետորեն չի դադարեցվել 2016-2017թթ. և շարունակում է մեծապես խաթարել միջազգային անվտանգությունը և համագործակցությունը, ԵԱՀԿ-ի երեք չափումները և գործունեություն ծավալելու կազմակերպության բուն կարողությունը:

**Ղրիմը** շարունակում է փաստացի մնալ Ռուսաստանի Դաշնության վերահսկողության ներքո, ինչը հանգեցրել է Ուկրաինայի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքների խախտմանը և Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների անմիջական խախտմանը: Քաղաքացիական

ակտիվիստների կողմից Ղրիմում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մշտադիտարկումից պարզ է դառնում, որ 2016-2017թթ. թերակղզում մարդու իրավունքների պաշտպանության վիճակն էլ ավելի է վատթարացել: Մարդու իրավունքների կոպիտ խախտումների շարքում կարելի է նշել կամայական կալանավորումը, մարդկանց առևանգումները, խոշտանգումները, բռնի անհետացումները, սպանությունները, կալանավորված անձանց ուժի գործադրմամբ Ռուսաստան տեղափոխումը և նրանց նկատմամբ քաղաքական հետապնդումները, ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարի օրենսդրության խախտումը, ինչպես նաև խաղաղ հավաքների և միավորումների և ազատ արտահայտվելու իրավունքների խախտումները, որոնց թիրախում հայտնվում են մասնավորապես Ղրիմի թաթարական համայնքի ներկայացուցիչները և ուկրաինամետ հայացքներ ունեցող անհատները: Ռուսաստանը չի կատարել ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն հանձնակատարի՝ «Ղրիմի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանության վիճակի գնահատման հարցերով ԵԱՀԿ առաքելության 2015թ. հուլիսի զեկույցում տեղ գտած և ոչ մի հանձնարարություն: ԵԱՀԿ-ի և այլ միջկառավարական կազմակերպությունների համար տեղում վիճակը մշտադիտարկելու հնարավորության բացակայությունն էլ ավելի է սրում Ղրիմում տիրող իրավիճակը:

Ուկրաինայի արևելյան հատվածում՝ **Դոնբասի շրջանում**, ընթացող աղետալի հակամարտության հետևանքով Ուկրաինան, Ռուսաստանը և ԵԱՀԿ ողջ տարածաշրջանը մեծ խնդիրների առաջ են կանգնել: «Շփման գծի» մոտակայքում բնակվող քաղաքացիական բնակչությունը շարունակում է տուժել Մինսկի համաձայնագրերի հիմնական դրույթները խախտող ռազմական բռնությունից և ամենօրյա ռմբակոծությունից: Զինված հակամարտության սկզբից ի վեր Ուկրաինայի արևելյան հատվածում սպանվել է ավելի քան 10.000 մարդ, մոտավորապես 23.000 մարդ վիրավորվել է, շուրջ երկու միլիոն մարդ ստիպված է եղել փախչել իրենց տներից, և լուրջ վնաս է հասցվել տարածաշրջանային ենթակառուցվածքներին: Տեղական և միջազգային ՀԿ-ների կողմից իրականացված մշտադիտարկումից պարզ է դառնում, որ հակամարտության բոլոր կողմերը կամայականորեն կալանավորում են մարդկանց, քաղաքացիական բնակչության մաս կազմող անձանց պահում են գաղտնի կալանավայրերի մենախցերում, խոշտանգումների են ենթարկում բանտարկյալներին, ինչպես նաև դիմում են բռնի անհետացման, մարդկանց մահապատժի են ենթարկում առանց համապատասխան դատաքննություն իրականացնելու, դիտավորյալ հարձակումներ են գործում քաղաքացիական բնակչության և քաղաքացիական կառույցների, այդ թվում՝ բժշկական հաստատությունների վրա, քաղաքացիական կառույցները և տրանսպորտային միջոցները ծառայեցնում են ռազմական նպատակների իրականացմանը, դիտավորյալ սպանում են քաղաքացիական բնակչության մաս կազմող անձանց և ոչ ակտիվ պայքարի մասնակիցներին, մերժում են արդար դատաքննության իրավունքը և այլն: Ռուսաստանի օժանդակությամբ անջատողական ուժերի կողմից կատարված խախտումների և հանցագործությունների ծավալը մեծապես գերազանցում է ուկրաինական կողմի նմանօրինակ գործողությունների ծավալը: Դոնեցկի և Լուգանսկի շրջաններում, որոնք ներկայումս Ուկրաինայի կառավարության վերահսկողության սահմաններից դուրս են, մարդու իրավունքները պաշտպանված չեն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներով արդարադատության անմատչելիության պատճառով: Միջազգային մարդասիրական կազմակերպությունների՝ հակամարտության գոտի մուտք գործելու

հնարավորությունը դեռևս խիստ սահմանափակ է: Ինչպես շեշտվել է 2016թ. հոկտեմբերի 12-ի ԵԽԽՎ-ի թիվ 2133 բանաձևում, միջազգային իրավունքի նորմերի շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունը պատասխանատվություն է կրում այդ տարածքներում մարդու իրավունքների խախտումների համար, քանի որ այն փաստացիորեն վերահսկում է այդտեղ գործող զինված խմբավորումները: Խիստ անհրաժեշտ է լիարժեքորեն և մանրակրկիտ քննության առնել Ուկրաինայի արևելյան հատվածում կատարված պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների մասին բոլոր հաղորդումները և մեղավորներին պատասխանատվության ենթարկել անկախ և անկողմնակալ դատարանում:

Մեղավորներին պատժելը և նրանց հանցագործություններից տուժած տասնյակ հազարավոր անձանց ու նրանց ընտանիքի անդամների համար արդարադատության վերականգնումը առանցքային քայլ է խաղաղության հաստատման գործընթացում: Մինսկի համաձայնագրերի հաջող իրագործման և ԵԱՀԿ-ի մասնակից պետությունների միջև վստահության վերականգնման համար անհրաժեշտ պայման է կայուն հրադադարի ռեժիմի հաստատումը: Ամեն դեպքում, անվտանգության վերականգնումը հնարավոր է միմիայն Ուկրաինայի իր սահմանների նկատմամբ վերահսկողության լիակատար վերականգնման և ԵԱՀԿ Հատուկ մշտադիտարկման առաքելության կողմից բոլոր սահմանային անցակետերի մշտադիտարկման պարագայում: Ազատ և արդար տեղական ընտրությունների անցկացման հիմնական նախապայմանն է քաղաքացիական և քաղաքական հիմնարար իրավունքների պաշտպանությունը: Ընտրողների կամքի ազատ արտահայտման հնարավորություն ստեղծելու համար անհրաժեշտ է ապահովել ընտրությունների ողջ ընթացքին Ուկրաինայի կուսակցությունների անարգել մասնակցությունը, նախընտրական փուլի և ընտրությունների ընթացքի բաց և ազատ լուսաբանումը տեղական ուկրաինական լրատվամիջոցների կողմից և այն երաշխիքները, որ տեղահանված անձինք կունենան ընտրություններին լիարժեք մասնակցելու հնարավորություն: Մշտադիտարկման և հաշտեցման գործընթացներում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անմիջական ակտիվ մասնակցությունը մեծապես կնպաստի ճգնաժամի հաղթահարմանը և խաղաղության և արդարության հաստատմանը:

2016 թվականին և 2017 թվականի առաջին կիսամյակում Եվրոպայում և ԱՄՆ-ում արձանագրվել է **աջ ծայրահեղական ազգայնական շարժումների և պոպուլիստական քաղաքական ուժերի կտրուկ աճ** և փախստականների մեծ հոսքով պայմանավորված դեռևս չհաղթահարված ճգնաժամը, ինչը հանգեցրել է **այլատյացության, հակասեմիտիզմի, իսլամաֆոբիայի և խտրականության խորացմանը**: Այդ երկրների ծայրահեղական շարժումները չունեն մեկ միասնական քաղաքական տեսլական, էլ չասած՝ քաղաքական ծրագիր: Այնուամենայնիվ, գլխավոր դերակատարներն ունեն որոշ ընդհանուր հատկանիշներ, ինչպիսիք են՝ առանձին անհատների իրավունքների համեմատ ազգային ինքնիշխանության, անվտանգության և ավանդական արժեքների դերի կարևորումը, որպես «խորթ» ընկալվող մարդկանց, օրինակ՝ մարդու իրավունքների ոտնահարման և պատերազմական իրավիճակից հեռացող փախստականների դեմ պոպուլիստական և պարզամիտ պաշտպանողական հռետորաբանության դիմելը, բացահայտորեն խտրական և այլատյաց քաղաքականություն և ընդհանուր առմամբ արհամարհանք հատկապես փոքրամասնությունների քաղաքացիական ազատությունների ու հիմնարար

իրավունքների նկատմամբ: Ծայրահեղ հակամիգրացիոն ուղերձներ տարածող պոպուլիստական կուսակցությունների թվի աճը խորացնում է առանձին պետություններում, ինչպես նաև ԵՄ-ի նման միջազգային հանրության մեջ առկա բացերը: Եվրոպական մի շարք երկրների, ինչպես նաև ԱՄՆ-ի կառավարություններն իրենց օրակարգերում կենտրոնական դեր են հատկացրել փախստականների դեմ ուղղված քաղաքականությանը և հրաժարվում են համագործակցել այլ պետությունների հետ փախստականների ընդունման և ինտեգրման բեռը կիսելու գործում: ԵԱՀԿ տարածաշրջանի բազմաթիվ վայրերում սահմանափակ հարձակումները հանգեցրել են ատելություն պարունակող խոսքի և միգրանտների դեմ ուղղված հանցագործությունների տարածմանը: ԵԱՀԿ-ի անդամ պետություններից շատերը չունեն հասարակությունները միավորող ինտեգրման քաղաքականություն: Այս պայմաններում առաջ է գալիս մոտ ապագայում մեկուսացված համայնքների թվի անընդհատ աճի վտանգը: ԵԱՀԿ ողջ տարածաշրջանում մարդկանց ընթացիկ տեղաշարժերի պատճառով առաջացած մարտահրավերները հաղթահարելու գործում հիմնական ուղղորդող սկզբունքը պետք է լինի բոլոր անհատների հիմնարար մարդու իրավունքների պաշտպանությունը: Բոլոր մարդկանց այս իրավունքները պետք է հավասարապես պաշտպանված լինեն ինչպես տվյալ պահին որևէ երկրի ճանապարհին գտնվելու կամ որևէ երկրի սահմանները հատելու ընթացքում, այնպես էլ որևէ երկիր ժամանելուց հետո: Հասարակական շրջանում դժգոհության ալիք բարձրացնող աջ ծայրահեղական պոպուլիստական կուսակցությունների ազդեցության աճի համատեքստում մեր հիմնական առաջարկությունների կիզակետում է ատելություն պարունակող խոսքի և ատելության հողի վրա կատարած հանցագործությունների դեմ պայքարի ամրապնդումը և ինտեգրման արդար ու ազնիվ քաղաքականության ընդունումը, ինչից կշահեն ինչպես միգրանտները, այնպես էլ ընդունող երկրների ողջ հանրությունը:

2016 թվականին ԵԱՀԿ տարածաշրջանի երկրներում արձանագրվել են մի շարք աննախադեպ **հակաժողովրդավարական սահմանադրական փոփոխություններ**, որոնք հանգեցրել են ժողովրդավարական ինստիտուտների խաթարմանը, օրենքի գերակայության սկզբունքի վերացմանը և հիմնարար իրավունքների ու ազատությունների սահմանադրական երաշխիքների թուլացմանը: ԵԱՀԿ-ի մի քանի այլ մասնակից պետությունների կառավարությունները քննարկում են նաև մոտ ապագայում իրենց երկրների սահմանադրություններում փոփոխություններ անելու ծրագրերը: Որոշ դեպքերում, երբ խորհրդարանում սահմանադրական մեծամասնության բացակայության պատճառով անհնարին էր դարձել սահմանադրական փոփոխությունների խթանումը, ընդունվեցին այնպիսի օրենսդրական միջոցներ, որոնք թուլացրին երկրի ժողովրդավարական ինստիտուտները՝ քաղաքական համակարգում հակաժողովրդավարական փոփոխություններ կատարելու համար: Անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ փոփոխությունները կատարվել են Վիեննայից դեպի արևելք թե՛ դեպի արևմուտք ընկած երկրներում, դրանք, որպես կանոն, ուղղված են եղել զսպումների և հաշվեկշիռների համակարգի փոփոխմանը՝ դրանով իսկ թուլացնելով տվյալ երկրի սահմանադրական դատարանի դերը կամ կառավարության նկատմամբ խորհրդարանի վերահսկողությունը: Այնպիսի ավտորիտար երկրներում, ինչպիսիք են Ադրբեյջանը, Հայաստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը և Ղրղըզստանը, սահմանադրական փոփոխությունների միջոցով իշխանությունն էլ ավելի է կենտրոնացվել իշխող ընտանիքների կամ խմբերի ձեռքերում, ամրապնդվել է

քաղաքական համակարգի ավտորիտար բնույթը, ուժերի հավասարակշռությունը փոխվել է գործադիր իշխանության օգտին, թուլացվել է դատական համակարգի անկախությունը և չեն ապահովվել հիմնարար իրավունքների ու ազատությունների երաշխիքները: Ներկայումս ոչ ազատական և պոպուլիստական ճահճում հայտնված կայուն ժողովրդավարական ավանդույթներ ունեցող Կենտրոնական Եվրոպայի երկրների հիմնական օրենսդրական դրույթներում կատարվել են փոփոխություններ, որպեսզի իշխող կուսակցությունները կարողանան շարունակել իրենց ձեռքում պահել իշխանությունը: Հունգարիայի կառավարությունը ձգտում է փոփոխություններ կատարել Հիմնարար օրենքում՝ դրանում ներառելով «սահմանադրական ինքնություն» արտահայտությունը՝ հույս ունենալով, որ այդ կախարդական խոսքերի միջոցով կկարողանա կանխել ազգային քաղաքականության վերանայումը եվրոպական դատարանների կողմից: Լեհաստանը հայտնվել է իրավական և սոցիալական խառնաշփոթի մեջ այն բանից հետո, երբ նոր կառավարությունը գործողություններ է ձեռնարկել Սահմանադրական դատարանի կազմը և աշխատանքի կանոնները փոխելու համար, որպեսզի իշխանությունները կարողանան օրենքներ ընդունել առանց անկախ մարմնի վերահսկողության: Սահմանադրական ճգնաժամը հանգեցրել է իշխանությունների տարանջատման սկզբունքի խաթարման և բացասական ազդեցություն է գործել զսպումների և հակակշիռների համակարգի վրա: Որոշ իրադարձությունների, օրինակ՝ Թուրքիայում չհաջողված հեղաշրջման փորձերի պարագայում արդարացվել է արտակարգ դրության պայմաններում տարածված հակաժողովրդավարական օրենսդրական փոփոխությունները և շահարկվել են սահմանադրական դրույթները, ինչն ուղեկցվել է հիմնարար իրավունքների և ազատությունների աննախադեպ սահմանափակումներով: Սահմանադրական փոփոխություններ կատարած բոլոր երկրներում մեծ ճնշումների են ենթարկվում դատական համակարգի անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցների անկախ աշխատանքը, լրատվամիջոցների ազատությունը և քաղաքացիական հասարակությունը, ինչը խստիվ հակասում է ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորություններին և ՄԱԿ-ին անդամակցության շրջանակներում երկրների ստանձնած պարտավորություններին:

Ավելին, վերջին տարիներին միջազգային մակարդակով ահաբեկչության ահագնացող սպառնալիքի պայմաններում մի քանի երկրների կառավարություններն ընդունել են **ավելի կոշտ հակաահաբեկչական օրենսդրություն**՝ բացահայտ անցում կատարելով դեպի անվտանգության ապահովման կոշտ միջոցներ՝ մարդու իրավունքների հաշվին: Հակաահաբեկչական այդ օրենքներում ահաբեկչական հանցագործությունները, գործողությունները և պատասխան գործողությունները շատ հաճախ սահմանվում են չափազանց լայն իմաստով՝ տեղիք տալով դրանց սխալ մեկնաբանությանը և կիրառմանը՝ փոքրամասնությունների ներկայացուցիչներին և քաղաքացիական հասարակությանը թիրախավորելու համար: Վերջերս ընդունված որոշ օրենքներով խիստ սահմանափակվում են ազատ արտահայտվելու իրավունքը, խաղաղ հավաքների ազատությունը և ազատ տեղաշարժվելու իրավունքը, ինչը կարող է հանգեցնել այդ օրենքների անհամաչափ կամ հայեցողական կիրառման: Նման օրենքներով հաճախ խախտվում են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային նորմերը: Այլ օրենքներով խախտվում են անհատների մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի և անձի անձեռնմխելիության իրավունքները՝ ընդլայնելով պետական

վերահսկողության լիազորությունների շրջանակը, և այդ նպատակով հաճախ ստիպելով մասնավոր տեխնոլոգիական ընկերություններին դառնալ պետական գործակալներ, ինչպես Ռուսաստանում, ԱՄՆ-ում և այլ երկրներում: Խիստ վտանգավոր է այն հանգամանքը, որ ազգային ողբերգությունների հետևանքով հաստատված բացառիկ լիազորությունները և ժամանակավոր միջոցները կարող են վերածվել մի նոր «սովորական գործելակերպի»՝ երկարատև ազդեցություն թողնելով մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանվածության վրա: Ընդ որում, միջազգային կազմակերպությունների համար ավելի բարդ է դառնում քննադատել նման պետություններին այն պայմաններում, երբ չափանիշները պահպանող այնպիսի երկիր, ինչպես օրինակ Ֆրանսիան, այժմ որդեգրել է նույն գործելակերպը: ԵԱՀԿ մասնակից պետությունները պետք է զգուշություն պահպանեն այս քայլը նոր «սովորական գործելակերպի» վերածելու գործում և պետք առաջարկեն արտակարգ դրության այնպիսի շրջանակ, որի միջոցով հնարավոր է հաստատել ԵԱՀԿ-ի առաջին և երրորդ չափումների խնդիրների հավասարակշռություն:

Որոշ պետություններ ավելի քիչ ուշադրություն են դարձնում **խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ պայքարին**՝ որպես փաստարկ բերելով ահաբեկչությունից «պաշտպանվելու» անհրաժեշտությունը: Կենտրոնական Ասիայում, մասնավորապես՝ Ուզբեկստանում և Թուրքմենստանում, խիստ տարածված է իրավապահ մարմինների և քրեակատարողական հաստատությունների ղեկավարության կողմից խոշտանգումների կիրառումը: Ռուսաստանյան բանտերից մեկի բանտարկյալի վերջերս հրապարակված նամակը հասարակության ուշադրությունը հրավիրեց բանտերում և նախնական կալանքի կենտրոններում խոշտանգումների տարածված կիրառման վրա: Բազմաթիվ զեկույցներ են ներկայացվել Թուրքիայում արտակարգ դրության ժամանակ ձերբակալված անձանց նկատմամբ դաժան և անմարդկային վերաբերմունքի մասին: Ռուսաստանը, Ադրբեջանը և Թուրքիան դադարեցրել են հրապարակել իրենց երկրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի զեկույցները: Մեծ Բրիտանիայի կառավարությունը, կարծես, պատրաստակամ է թուլացնել օտարերկրացիներին այնպիսի երկրներ վերադարձնելու արգելքը, որտեղ նրանք կարող են խոշտանգումների ենթարկվել: Բացի այդ, մի քանի զեկույցներ են ներկայացվել մի շարք եվրոպական երկրների կալանավայրերում միգրանտների նկատմամբ վատ վերաբերմունքի մասին: ԱՄՆ-ի նորընտիր նախագահը հրապարակավ հայտնել է խոշտանգումների միջազգային արգելման նկատմամբ իր արհամարհանքը և կողմ արտահայտվել ջրահեղձման նմանակմամբ գործողությունների վերսկսմանը, որոնք արգելված էին և որպես խոշտանգում էին համարվել նախորդ վարչակազմի կողմից, և դեմ արտահայտվել Գուանտանամոյի ծոցի բանտի փակմանը: Չնայած վերջերս ԵԱՀԿ-ի կողմից ձեռնարկված որոշակի դրական քայլերի, որոնք ուղղված էին ողջ տարածաշրջանում խոշտանգումների տարածման խնդրի հաղթահարման վրա իր ջանքերի կենտրոնացմանը, այս ամոթալի հանցագործությունը վերացնելու համար հարկավոր է ավելի մեծ աշխատանք տանել:

Մտահոգությամբ պետք է նշենք, որ ԵԱՀԿ տարածաշրջանի երկու երկիր շարունակում են **կիրառել կյանքի իրավունքի մերժման ծայրահեղ դրսևորում հանդիսացող մահապատիժը**: Այդ երկրներն են Բելառուսը և Միացյալ Նահանգները: Բելառուսում մահապատիժը կիրառվում է նաև որպես խոշտանգման ձև դատապարտյալի և նրա ընտանիքի նկատմամբ: Արդար դատաքննության բացակայության և ՄԱԿ-ի Մարդու Իրավունքների Կոմիտեի կողմից այդ գործերի վերանայման հնարավորության բացահայտ անտեսման և մահապատիժ

դատավճիռների արագ կատարման պայմաններում անհնարին է դառնում ուղղել հնարավոր դատական սխալները: ԱՄՆ-ում մի շարք գրանցված գործերում մահապատիժը կիրառվել է որպես խոշտանգումների նմանվող ընթացակարգ, և առկա են մահապատժի դատավճիռներում դատական սխալների մասին վկայող փաստագրված ապացույցներ: Կառավարությունն իր իսկ քաղաքացիներին սպանելու նողկալի գործելակերպը մարտահրավեր է մարդու իրավունքների բուն գաղափարի համար: Կոչ ենք անում այդ երկու պետություններին անմիջապես դադարեցնել այս դաժան գործելակերպը և օրենսդրությամբ ամրագրել մահապատժի վերացումը: Խիստ մտահոգություն ենք հայտնում նաև վերջերս ԵԱՀԿ որոշ մասնակից պետություններում հասարակության աչքում մահապատժի հիմնավորման և բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հնչեցված դրա վերականգնման կոչերի կապակցությամբ:

Առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ ԵԱՀԿ տարածաշրջանում զգալիորեն սահմանափակվել է **քաղաքացիական հասարակության գործունեության շրջանակը**, և նշանակալիորեն շատացել են իրավապաշտպանների անվտանգությանը սպառնացող վտանգները: Ռուսաստանի «Օտարերկրյա գործակալների» մասին» օրենքով ոգեշնչված՝ Կենտրոնական Ասիայի և Արևելյան Եվրոպայի երկրները, այդ թվում՝ Հունգարիան և Լեհաստանը, Ադրբեջանը և Ղրղզստանը մշակել և գործադրել են նմանօրինակ օրենսդրություն՝ թիրախավորելով պետական քաղաքականությունը քննադատող ՀԿ-ների գործունեությունը և քաղաքացիական հասարակության միջազգային համագործակցությունը: Ադրբեջանում և Կենտրոնական Ասիայում գործող ՀԿ-ները և ակտիվիստները շարունակում են խիստ ճնշումների ենթարկվել իրավապահ մարմինների կողմից, և առկա են հաղորդումներ ՀԿ-ների անդամների նկատմամբ սպառնալիքների և բռնությունների մասին: Քաղաքացիական հասարակությունը ներկայացնող ակտիվիստների դեմ հարձակումները շատ դեպքերում պատշաճ կարգով չեն քննվում, և մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվում: Արդյունքում առաջանում է անպատժելիության մթնոլորտ, և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դեմ բռնություն գործադրելը դառնում է թույլատրելի, այդ թվում՝ կառավարության աջակիցների ինքնահռչակ «հայրենասիրական», ազգայնական կամ կրոնական խմբերի մասնավոր դերակատարների կողմից: Գոյություն ունի հստակ կապ մի կողմից ահաբեկչության և արմատականացման աճող սպառնալիքի և մյուս կողմից ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարի շրջանակներում քաղաքացիական հասարակության վրա դրված սահմանափակումների միջև: Ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան Եվրոպայի երկրների կառավարությունները սխալմամբ թե դիտավորյալ ծայրահեղականության դեմ պայքարն օգտագործում են քաղաքացիական հասարակության կողմից քննադատության արտահայտումը ճնշելու համար և հրաժարվում են ճանաչել և խթանել փոքրամասնությունների ներկայացուցիչների և մշտաբնակ օտարերկրյա քաղաքացիների (ռեզիդենտ) հետ կապ պահպանելու շնորհիվ քաղաքացիական հասարակության ունեցած դերակատարումը արմատականացման ու բռնի ծայրահեղականության դեմ պայքարելու գործում: ԵԱՀԿ ողջ տարածաշրջանում ծավալվող այս բացասական զարգացումները մեծապես հակասում են 2014-2015 թթ. ընդունված ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի «Իրավապաշտպանների պաշտպանության և միավորման ազատության մասին ուղեցույցներին»: Պարզ է, որ քաղաքացիական հասարակության գործունեության շրջանակի սահմանափակման խնդրի լուծման նոր ուղիները պետք է փնտրել և գտնել ԵԱՀԿ շրջանակներում:



**Քաղաքական հետապնդումները և արդար դատաքննության երաշխիքների բացակայությունը** համակարգային խնդիր է ԵԱՀԿ-ի շատ մասնակից պետություններում, որտեղ ինքնակալ (ավտոկրատ) իշխանություններն արդարադատությունն օգտագործում են իրենց քննադատողներին լռեցնելու և այլակարծությունը ճնշելու համար: Կենտրոնական Ասիայի երկրներում, մասնավորապես՝ Թուրքմենստանում, դեռևս տարածված են քաղաքական ընդդիմադիրների և ակտիվիստների ազատազրկումը, նրանց նկատմամբ խոշտանգումների կիրառումը և բանտերում նրանց բռնի անհետացումը: Տարածաշրջանի շատ երկրներում ընդդիմադիրները, կոռուպցիայի դեմ պայքարող ակտիվիստներն և հետաքննող լրագրողներն ու երիտասարդ ակտիվիստները մշտապես բախվում են ձեռքարկումների և անարդար դատաքննության վտանգին, և փաստաթղթավորված տեղեկությունների համաձայն՝ քաղաքականությանը հատկապես մեծ թիվ են կազմում Թուրքիայում, Ուզբեկստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ռուսաստանում, Ադրբեջանում և Հայաստանում, իսկ այլ երկրներում, օրինակ՝ Բելառուսում, տարածված է իշխանություններին քննադատող անձանց ազատ արձակելու և այնուհետև կրկին ազատազրկելու միտումը:

ԵԱՀԿ մասնակից պետություններից շատերը, ինչպես արևելյան, այնպես էլ Արևմտյան Եվրոպայի երկրները հաճախ սահմանափակել են **խաղաղ հավաքների ազատության իրավունքը**, շատ դեպքերում հակահարկերից անհատների միջոցառումների իրականացման և կայունության ու հասարակական կարգի պահպանման պատրվակով: Ռուսաստանի, Լեհաստանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների կողմից վերջերս ընդունված և կիրառվող օրենսդրական փոփոխություններն ակնհայտորեն հակասում են մարդու իրավունքների միջազգային նորմերին ու ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորություններին և չեն համապատասխանում համաշխարհային և ժողովրդավարական պետությունում անհրաժեշտության հիմնական սկզբունքներին: Ռուսաստանում, Բելառուսում, Հայաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում և ԵԱՀԿ այլ մասնակից պետություններում խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերջերս արձանագրված սահմանափակումներում տարածված են եղել չհիմնավորված սահմանափակումների կիրառումը և խաղաղ հավաքներ անցկացնելու հայտերի ակնհայտորեն ապօրինի մերժումը, ցուցարարների կամայական և զանգվածային կանխարգելիչ կալանքը, ցուցարարների դեմ դաժան ձևով անհամաչափ ուժի կիրառումը, հավաքների մասնակիցներին ծեծի և խոշտանգումների ենթարկող իրավապահ մարմինների պաշտոնյաների անպատժելիությունը, մեղադրյալների համար արդար դատաքննության երաշխիքների բացակայությունը, ակտիվիստներին «զանգվածային անկարգություններ կազմակերպելու» մեղադրանք առաջադրելը և նրանց երկարատև ազատազրկման դատապարտումը և տեղական ու միջազգային մակարդակներով հավաքների քաղաքացիական մշտադիտարկման իրականացման խոչընդոտումը, ինչն ակնհայտորեն հակասում է ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած պարտավորություններին:

ԵԱՀԿ անդամ պետություններից շատերում՝ Վիեննայից թե՛ դեպի արևելք և թե՛ դեպի արևմուտք ընկած երկրներում, շարունակական հետընթաց է արձանագրվել **ազատ արտահայտվելու իրավունքի** իրացման ոլորտում: Լրագրողները և զանգվածային լրատվության ոլորտի այլ մասնագետները բախվում են բազում սպառնալիքների, այդ թվում՝ սպանության, մահվան սպառնալիքների, կամայական ձեռքարկության և ազատազրկման, խոշտանգումների, ֆիզիկական բռնության, իրավական, վարչական և ֆինանսական ճնշումների, զրպարտության և ահաբեկման:

Այս միջոցները ոչ միայն վտանգում են լրագրողների և զանգվածային լրատվության ոլորտի այլ մասնագետների կյանքը և խախտում նրանց հիմնարար իրավունքները, այլև նպատակ ունեն կասեցնելու ազատ արտահայտվելու իրավունքը և ճնշելու հասարակության լայն շրջանակներում երկխոսության ծավալման հնարավորությունը: Հատկապես մտահոգիչ է արտակարգ դրության ժամանակ լրագրողների և զանգվածային լրատվության ոլորտի այլ մասնագետների մեծածավալ ճնշումների միտումը և հակամարտության գոտիներում լրագրողներին սպառնացող շարունակաբար մեծացող վտանգը: Պետությունները ոչ միայն համապատասխան միջոցներ չեն ձեռնարկում նման վտանգը կանխելու, քննություն անցկացնելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և պատժելու ուղղությամբ, այլև հաճախ հենց իրենք են մասնակցում իրենց ազատ արտահայտվելու իրավունքն իրացնող անձանց դեմ բռնության գործադրման, գրաքննության և հետապնդումների իրականացմանը: Հատկապես մտահոգիչ են Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և մի շարք այլ մասնակից պետությունների վերջերս ձեռնարկած քայլերն ազատ արտահայտվելու իրավունքի լրացուցիչ սահմանափակումների և առցանց տեղեկատվության հասանելիության ուղղությամբ, ինչի արդյունքում գրաքննության են ենթարկվել և արգելափակվել ինտերնետային կայքեր, սահմանափակվել է սոցիալական ցանցերի և հաղորդագրությունների փոխանակման ծրագրերի («մեսենջեր») հասանելիությունը նոր օրենսդրական դրույթների միջոցով, որոնցով արգելվում է նման կայքերի, ցանցերի և ծրագրերի բովանդակությունը, պատասխանատվության են ենթարկվում բլոգերները, և ինտերնետային ծառայությունների մատակարարներին (պրովայդերներ) ստիպում են առանց համապատասխան իրավական հիմքերի և դատական վերահսկողության բացահայտել օգտվողների ինքնությունը և նրանց հաղորդակցության բովանդակությունը:

Մտահոգությունների տեղիք տվող երևույթներից է նաև **ապատեղեկատվության** տարածումը որպես ազատ արտահայտվելու իրավունքի խախտման գործիք, որի միջոցով Ռուսաստանն ազդեցություն է ձեռք բերել Եվրոպայում՝ ՉԼՄ-ների միջոցով քարոզչություն իրականացնելով և տարածելով կեղծ տեղեկություններ, հատկապես փոքրամասնությունների համայնքների մասին: Դրա նպատակն էր հող նախապատրաստել Եվրոպայում տարածայնությունների առաջացման համար՝ ստիպելով առանձին անհատներին հարցականի տակ դնել իրենց կառավարությանն առնչվող փաստերը և քաղաքականությունը, մասնավորապես այն դեպքերում, երբ նման քաղաքականությունը խիստ կարևոր նշանակություն ունի Ռուսաստանի իշխանությունների համար: Կենտրոնական Ասիայի երկրներում գործող վարչակարգերի ճնշող քաղաքականությունը և ռուսաստանյան ՉԼՄ-ների ազդեցությունը հանգեցրել են ապատեղեկատվության արշավների իրավապաշտպանների, կանանց շարժումների ակտիվիստների և ԼԳԲՏ անձանց նկատմամբ, որոնք խթանում են Կենտրոնական Ասիայի երկրներում ծավալված ազգայնական շարժումները, որոնք պաշտպանում են վերադարձը այսպես կոչված ավանդական արժեքներին, որոնք ներառում են օտարերկրացիների դեմ ուղղված տրամադրությունները, ԼԳԲՏ անձանց դեմ ուղղված քաղաքականությունը և կանանց իրավունքների սահմանափակումները: Նման արշավների հետևանքներն էլ ավելի են բարդանում միջազգային իրավունքի գերակայության սկզբունքի մերժմամբ: Բալկանյան թերակղզու արևմտյան հատվածի երկրներում կրկին մեծ տարածում է ստացել ատելություն պարունակող խոսքը: Այսօր ԵԱՀԿ-ի և միջազգային հանրության

առջև ծառայած առավել բարդ խնդիրներից է ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության և տեղեկատվության հասանելիության ապահովման պայմաններում **քարոզչության և ատելություն պարունակող խոսքի** դեմ արդյունավետորեն պայքարելու երկրնտրանքը:

ԵԱՀԿ-ի տարածաշրջանում ավելի ու ավելի մեծ մտավախության տեղիք են տալիս **մանիպուլյացիաները, բացահայտ ընտրակեղծիքները և քաղաքական մրցակցության ճնշումը**, որոնք խոչընդոտում են պարբերաբար անցկացվող ազատ և արդար ընտրությունների միջոցով ժողովրդավարական կառավարման գործընթացին հասարակության մասնակցությունն ապահովելու ԵԱՀԿ-ի շրջանակներում ստանձնած առանցքային պարտավորության իրականացմանը: Այս միտումը խաթարում է իշխանությունների լեգիտիմությունը և հանգեցնում է հասարակության արմատականացմանը՝ կայունություն հաստատելու փոխարեն, որի անվան տակ ներկա իշխանավորները կառչում են իշխանությունից: Ավտորիտար վարչակարգերին շատ դեպքերում բնորոշ է ոչ ժողովրդավարական միջոցներով իշխանությունը պահպանելու նպատակով ընտրական մանիպուլյացիաներին դիմելը, ինչը խաթարում է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի, ԵԱՀԿ ԽՎ-ի և այլ միջազգային կազմակերպությունների՝ ընտրությունների դիտորդություն իրականացնելու կարողությունները՝ հանգեցնելով նրանց եզրակացությունների բացահայտ վիճարկմանը և նրանց հանձնարարականների անտեսմանը: Տեղական և միջազգային մակարդակներով քաղաքացիական հասարակության դիտորդներին նույնպես չեն թույլատրում մշտադիտարկում իրականացնել և թիրախավորում են որպես հետապնդումների և ոտնձգությունների առարկա: Ավելին, մենք հատկապես մտահոգված ենք **«կեղծ դիտորդական առաքելությունների»** նոր և տարածվող երևույթով, որի պարագայում ավտորիտար իշխանությունները ֆինանսավորում են, շատ դեպքերում՝ վստահված անձանց միջոցով, ոչ պաշտոնական «դիտորդական առաքելությունների», որոնց կազմում ընդգրկվում են ժողովրդավարական պետությունների խորհրդարանների և միջազգային խորհրդարանական մարմինների, այդ թվում՝ ԵԽԽՎ-ի, ԵԱՀԿ ԽՎ-ի և Եվրախորհրդարանի ներկայիս և նախկին անդամները, ովքեր գալիս են կարճատև այցով, չեն օգտվում ՄԱԿ-ի և ԵԱՀԿ չափանիշների վրա հիմնված դիտորդության մեթոդաբանությունից, չեն կազմում գրավոր զեկույցներ, վիճարկում են ԵԱՀԿ դիտորդների եզրակացությունները և խարդախ ընտրությունները հրապարակավ ներկայացնում են որպես ազատ և արդար ընտրություններ: Այս «կեղծ դիտորդներին» հյուրընկալում են նախագահները, նրանց հայտարարությունները մեծ ծավալով վերարտադրվում են պաշտոնական լրատվամիջոցներում և օգտագործվում են իշխող վարչակարգի օրինականությունը հասարակության շրջանակներում հաստատելու համար: Այս նոր միտումը միջազգային կոռուպցիայի ակնհայտ դրսևորումներից է և միաժամանակ մարտահրավեր ընտրական գործընթացների միջազգային մշտադիտարկման բուն գաղափարի համար՝ խաթարելով ԵԱՀԿ-ի՝ որպես ազատ և արդար ընտրությունների երաշխավորի առանցքային դերը:

Խիստ մտահոգիչ ենք համարում ԵԱՀԿ անկախ կառույցների վրա ավելի մեծ ճնշումների գործադրումը, նրանց լիազորությունները վերանայելու ու թուլացնելու և նրանց գործունեությունը որպես լիազորությունների չարաշահում վիճարկելու փորձերը և նրանց կատարած աշխատանքի դիմաց բավարար ֆինանսական միջոցներ չտրամադրելը: Այս բացասական միտումի շրջանակներում մի շարք պետություններ գործադրում են համակարգային ջանքեր՝ ուղղված տեղերում աշխատելու ԵԱՀԿ-ի

հնարավորությունների թուլացմանը, այդ թվում՝ տեղում գործող լիարժեք ներկայացուցչությունների կրճատմանը սահմանափակ լիազորություններով ծրագրային գրասենյակների կամ առհասարակ դրանց փակմանը:

## **ԲԵԼԱՌՈՒՍԸ ԵԱՀԿ-Ի «ՄՈՍԿՈՎՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ» ԶԵԿՈՒՅՑԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՑ ՎԵՑ ՏԱՐԻ ԱՆՑ**

ԵԱՀԿ Զեկուցողի՝ Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ զեկույցը («Մոսկովյան մեխանիզմ» զեկույց) ԵԱՀԿ Մշտական խորհրդին<sup>2</sup> ներկայացնելու օրվանից անցել է վեց տարի: 2017 թվականի հուլիսին Մինսկում կայացած ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի 26-րդ ամենամյա նստաշրջանը և քաղաքացիական հասարակության զուգահեռ ֆորումը յուրահատուկ հնարավորություն են ընձեռում «Մոսկովյան մեխանիզմ» զեկույցի հրապարակումից վեց տարի անց Բելառուսում արձանագրված փոփոխությունների մասին մտորելու և երկրի առջև ծառայած մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները միջազգային, այդ թվում՝ ԵԱՀԿ-ի գործիքների և մեխանիզմների միջոցով լուծելու ռազմավարությունը քննարկելու համար:

«Մոսկովյան մեխանիզմ» զեկույցում մանրամասն և անկողմնակալ վերլուծվել են նախագահական ընտրության անցկացման օրը՝ 2010 թվականի դեկտեմբերի 19-ի երեկոյան տեղի ունեցած իրադարձությունները, այդ թվում՝ Մինսկում ցույցի բռնի ցրումը և զանգվածային կալանավորումները, ձերբակալությունները, ահաբեկումը, խոշտանգումները և հաջորդող ամիսներին հարյուրավոր ցուցարարների անարդար դատավարությունները: Իրավիճակը որպես «ճգնաժամ» որակող ԵԱՀԿ-ի զեկուցողի խոսքով՝ «փաստահավաք առաքելությունը նշում է մարդու իրավունքների կոպիտ և համակարգված խախտումների ծանրությունը, տևողությունը և ծավալը» և «սոցիալական վերահսկողության համակարգը, որի հիմքում ընկած են վախը և ոտնձգությունները, խոշտանգումները և շորթումը, հեռախոսագրույցների գաղտնալսումը, կեղծ ցուցմունքները և ուժի կիրառմամբ ստացված ինքնախոստովանական ցուցմունքները, անձանց և նրանց ընտանիքների նկատմամբ կամայական և խտրական միջոցների և պատժամիջոցների կիրառումը: Որոշ բարեհունչ իրավական ձևակերպումների ներքո չի գործում ո՛չ անկախ արդարադատությունը, ո՛չ էլ օրենքի գերակայությունը»: Զեկույցում ներկայացվել են Բելառուսի կառավարությանը հասցեագրված մանրամասն հանձնարարականներ, որպեսզի այն վերացնի այս զանգվածային խախտումները, փոփոխի ներքին օրենսդրական և քաղաքական դաշտը և միջոցներ ձեռնարկի մարդու իրավունքների պաշտպանության հարցերով միջազգային համագործակցությունը խթանելու համար:

2011 թվականի գարնանը ԵԱՀԿ-ի «Մոսկովյան մեխանիզմ» զեկույցի, ինչպես նաև Մինսկում ընթացող դատավարությունների դիտարկման մասին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի զեկույցի հրապարակումը հանգեցրեց Բելառուսում տարածված ճնշումների նկատմամբ միջազգային արձագանքի ծավալների ընդլայնմանը, այդ թվում՝ 2012 թվականին Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության

<sup>2</sup> ԵԱՀԿ Զեկուցողի զեկույցը Բելառուսի մասին, 28 մայիսի 2011թ., <http://www.osce.org/odihr/78705>:

վիճակի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի պաշտոնի հաստատմանը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի ամենամյա բանաձևերի ընդունմանը, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովում Բելառուսի հարցերով աշխատանքային խմբի և ԵՆԽԿ-ում Բելառուսի հարցերով զեկուցողի գործունեության խթանմանը, ինչպես նաև Եվրամիության, ԱՄՆ-ի և բազմաթիվ այլ երկրների կողմից մի շարք քայլերի ձեռնարկմանը, այդ թվում՝ նպատակային սահմանափակումների, օրինակ՝ ազատ տեղաշարժման արգելքի և տնտեսական պատժամիջոցների կիրառմանը: 2011-2017թթ. Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ միջազգային իրավապաշտպան հաստատությունների գնահատականները եղել են ճշգրիտ և մանրամասն և պարունակել են հետագա զարգացման հետ կապված պարզ ու ողջամիտ առաջարկներ:

Սակայն այդ միջոցները շատ աննշան ազդեցություն են ունեցել նշված երկրում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վրա: Մի կողմից, միջազգային հանրության գործողությունների շնորհիվ հաջողվել է որոշ չափով մեղմել ճնշումների ամենադաժան դրսևորումները. այս կապակցությամբ առաջին հերթին պետք է նշել 2015 թվականի սեպտեմբերի դրությամբ նախկինում ազատագրված դատապարտված կառավարության տասնյակ ընդդիմադիրների ազատ արձակման մասին: Մի քանի տարի է, ինչ երկրում չեն արձանագրվել նոր զանգվածային հետապնդումներ, օրինակ՝ տասնյակ մարդկանց միաժամանակյա կամայական կալանավորումը, ծեծի ենթարկելը, ձերբակալությունները, քաղաքական դրդապատճառներով դատավարությունները և բանտարկումը առնվազն այն ծավալով, ինչ 2010 թվականի դեկտեմբերին և 2011 թվականի առաջին կիսամյակում: Որոշ չափով ընդլայնվել է խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման հնարավորությունը: Ընդդիմության թեկնածուները կարողացել են իրենց նախընտրական քարոզարշավները կազմակերպել համեմատաբար հանգիստ պայմաններում առանց նշանակալի խոչընդոտների: Չգրանցված ՀԿ-ների գործունեության նկատմամբ քրեական հետապնդման դեպքեր չեն արձանագրվել:

Մյուս կողմից, նախկին քաղաքատարկյալներից ոչ ոք չի արդարացվել միջազգային հանրության պահանջին համապատասխան, և նրանց հիմնարար ազատությունների և իրավունքների իրացումը դեռևս սահմանափակված է: 2010 թվականի դեկտեմբերին և հաջորդող ամիսներին արձանագրված մարդու իրավունքների խախտումների մասով քննություն չի իրականացվել, և ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Նախքան 2010 թվականն ընդունված բոլոր «հին» ռեպրեսիվ օրենքները մնացել են ուժի մեջ, և 2010 թվականից հետո ընդունվել են մի շարք նոր նման օրենքներ: Գործնականում մարդու իրավունքների ոլորտում որևէ դրական համակարգային փոփոխություններ չեն արձանագրվել, և շարունակում են գործել քաղաքական դրդապատճառներով նոր հետապնդումների համար նպաստավոր պայմանները: 2015 թվականի նախագահական ընտրությունները և 2016 թվականի խորհրդարանական ընտրություններ եղել են 1996 թվականից ի վեր բոլոր նախորդ ընտրությունների նման թերի, անազատ և անարդար:

Միջազգային հանրության կողմից առկա լծակները ոչ հետևողականորեն կիրառելու հետևանքով Բելառուսը չի կատարել 2011 թվականի ԵԱՀԿ-ի «Մոսկովյան մեխանիզմ» զեկույցի և 2010 թվականի դեկտեմբերի նախագահական ընտրություններին հաջորդած ճնշումներին ի պատասխան 2011 թվականին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի ընդունած Բանաձևի հանձնարարականներից

և ոչ մեկը: Բելառուսի իշխանությունները չեն կատարել նաև մարդու իրավունքների և օրենքի գերակայության հետ կապված հարցերի վերաբերյալ հետազայում ընդունված հանձնարարականները, որոնք տեղ են գտել 2012-17 թվականների ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի հետագա ամենամյա բանաձևերում, Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի զեկույցներում, ԵԽԽՎ-ի և ԵԱՀԿ-ի խորհրդարանական վեհաժողովի՝ Բելառուսի հարցերով զեկուցողների և աշխատանքային խմբերի զեկույցներում, ինչպես նաև ընտրությունների և դատավարությունների դիտարկման վերաբերյալ ԵԱՀԿ-ի ԺՀՄԻԳ-ի զեկույցներում: Մի շարք ռեպրեսիվ օրենքների ընդունումը և ռեպրեսիվ գործելակերպի պահպանումը բացասաբար են ազդում հիմնարար ազատությունների և իրավունքների վրա, օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքի, միավորումների և խաղաղ հավաքների ազատության, ազատ տեղաշարժվելու իրավունքի, արդարադատության մատչելիության, կամայական կալանավորումից պաշտպանված լինելու իրավունքի, խոշտանգումներից, բռնի անհետացումից և առևանգումից զերծ մնալու իրավունքի, կյանքի իրավունքի, իրավապաշտպանների անվտանգության և ազատ ու արդար ընտրությունների անցկացման վրա: Ճնշումների են ենթարկվում քաղաքացիական ակտիվիստները, իրավապաշտպանները, բողոքի ցույցերի մասնակիցները, այդ թվում՝ ուսանողները, փաստաբանները, անկախ լրագրողները և բլոգերները: Հատկապես աղաղակող անարդարության դեպքերից է կեղծ մեղադրանքներով իրավապաշտպան Ելենա Տոնկաչևային երկրից վտարելը և երեք տարի ժամկետով Բելառուս վերադառնալու նրա նկատմամբ արգելքը վերացնելու մերժումը, ինչն ակնհայտորեն ուղղված է նրա հասարակական գործունեության կանխարգելմանը:

Ինչպես և նախկինում, ներկայումս նույնպես Բելառուսի կառավարությունը լիարժեքորեն չի համագործակցում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմների հետ ամենակարևոր և հրատապ խնդիրների շուրջ: Այն ոչ միայն չի ճանաչում Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի լիազորությունը, այլև հրապարակավ անտեսում և վիճարկում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի ընդունած բանաձևերը, չի կատարում ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների հանձնարարականների մեծ մասը և հրաժարվում է հաշվի առնել անհատական բողոքների վերաբերյալ նրանց տեսակետները: Հիմնական խնդիրների լուծման ընթացքը շարունակում է մնալ անմխիթար վիճակում՝ 2011 թվականից սկսած՝ վերածվելով մարդու իրավունքների ոլորտում ձգձգված ճգնաժամի, որտեղ արձանագրված խախտումները, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի խոսքով, կրում են «համակարգային և համակարգված» բնույթ:

Այնուամենայնիվ, չնայած Բելառուսում մարդու իրավունքների ոլորտում արձանագրված ճգնաժամի հաղթահարման և ազատ ու արդար ընտրությունների անցկացման գործում շոշափելի առաջընթացի բացակայությանը, 2015-2016 թվականներին Արևմտյան Եվրոպայի երկրները որոշեցին վերացնել խախտումներին մասնակցած անձանց և հաստատությունների նկատմամբ 2011-2012 թվականներին գործադրված սահմանափակումները և Բելառուսի կառավարությանն ընձեռել երկխոսության և տնտեսական համագործակցության գծով նոր աշխատանքներում ներգրավվելու «ևս մեկ հնարավորություն»:

Բելառուսի նկատմամբ Արևմտյան Եվրոպայի երկրների քաղաքականության՝ մարդու իրավունքների առաջնահերթության վրա հիմնված արժեքային մոտեցումից դեպի «պրագմատիկ» մոտեցում վերջերս արձանագրված կտրուկ անցումը հիմնականում պայմանավորված է, թերևս, Ռուսաստանին Ղրիմի միացման և Ուկրաինայի արևելյան հատվածում սկսված հակամարտության պատճառով Եվրոպայի առջև ծառայած անվտանգության սպառնալիքներից խուսափելու նկատառումներով:

Մարդու իրավունքների ոլորտում համակարգային փոփոխությունների բացակայության հետևանքով քաղբանտարկյալների առկայությունը շարունակում է մնալ պաշտոնական Մինսկի և միջազգային հանրության միջև փոխհարաբերությունների հաստատման համակարգի հիմնական վճռորոշ գործոնը: Ակնհայտ է, որ Բելառուսի կառավարությունը քաղբանտարկյալների հարցն օգտագործում է որպես առևտրային գործիք: Ամեն անգամ նրանց ազատ արձակելուց հետո Արևմուտքը որպես «պարզ» Բելառուսին տրամադրում է առևտրի տարածքն ընդլայնելու հնարավորություն և ֆինանսական աջակցություն, ինչից հետո իշխանությունները կալանավորում և ազատագրված են դատապարտում ընդդիմադիրների մի նոր խումբ: Եվ ամեն ինչ վերսկսվում է՝ հանգեցնելով «դեժա վյուի» (անցյալ դեպքերը կրկին վերապրելու երևույթ):

Եվ իսկապես, 2010-2011 թվականների ձերբակալություններից հետո բանտերում պահվող քաղբանտարկյալներին 2015 թվականի օգոստոսին ազատ արձակելուց հետո ընդամենը մի քանի ամիս անց Բելառուսում հայտնվեցին նոր քաղբանտարկյալներ: Բելառուսի իրավապաշտպանների հանրության կողմից որպես քաղբանտարկյալ ճանաչված երկու անձինք այսօրվա դրությամբ շարունակում են մնալ ճաղերի ետևում: Նրանք են՝ Միխաիլ Ժամչուժնին և Դմիտրի Պալիյենկան, ովքեր դատապարտվել են համապատասխանաբար՝ 2015 և 2016 թվականներին: 2015 և 2016 թվականներին ձերբակալվել և ազատ են արձակվել ևս մի քանի անձինք:

Արևմուտքի հետ տնտեսական և քաղաքական հարաբերություններն ամրապնդելու նպատակով անցած երկու տարվա ընթացքում Բելառուսի կառավարությունը սկսել է ակտիվորեն մասնակցել ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններից մի քանիսի հետ երկխոսությանը: Ի պատասխան միջազգային հանրության՝ մարդու իրավունքների ոլորտում իրական առաջընթաց ցուցադրելու պահանջներին՝ 2016 թվականի հոկտեմբերին կառավարությունն ընդունեց մարդու իրավունքների վերաբերյալ միջգերատեսչական ծրագիր՝ «Համընդհանուր պարբերական վերանայման» գործընթացի երկրորդ փուլի ընթացքում ընդունված հանձնարարականները, ինչպես նաև ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններից մի քանիսի հանձնարարականները կատարելու նպատակով, և 2017 թվականի մարտին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացրեց Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրագործման վերաբերյալ իր հինգերորդ պարբերական զեկույցը: Այնուամենայնիվ, կառավարության այս ծրագիրն ընդունվել է առանց անկախ քաղաքացիական հասարակության ներգրավման, և դրա իրականացումը թափանցիկ չէ, քանի որ իրականացման ընթացքի մասին զեկույցների հրապարակում չի նախատեսվում: Ամենակարևորն այն է, որ ծրագիրը չի անդրադառնում տարիներ շարունակ միջազգային հանրության կողմից բարձրացված հիմնական խնդիրներին: Եթե այս ծրագրի իրականացման գործում

չի են փոփոխություններ, երկիրն իրական առաջընթաց չի ապրի, և պարզ կդառնա, որ դա ուղղակի ձևական ծրագիր է:

Հետագա ճնշումները կարելի է կանխել միմիայն քաղաքացիական և քաղաքական իրավունքները ճնշող օրենքները և սահմանափակող գործելակերպը վերացնելու միջոցով, ինչպես նաև քաղաքական բազմակարծությունը և լրատվամիջոցների ազատությունները և Բելառուսի կառավարության՝ մարդու իրավունքների պաշտպանության մասով ստանձնած միջազգային պարտավորությունները կատարելու իրական քաղաքական կամքը վերականգնելու միջոցով: Նշված ազատությունները և քաղաքական կամքը ներկայումս բացակայում են: Իրավապաշտպանները զգուշացրել են, որ Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համակարգային փոփոխությունների բացակայությունը նշանակում է, որ քաղաքական հետապնդումների վերսկսումը զուտ ժամանակի հարց է:

Ցավոք, նման կանխատեսումներն իրականություն դարձան. զանգվածային ճնշումների մի նոր ալիք սկիզբ առավ այս տարվա մարտ-ապրիլ ամիսներին, երբ 2017թ. մարտի 25-26-ը Մինսկում զանգվածաբար կալանավորվեցին խաղաղ ցուցարարներ, լրագրողներ և իրավապաշտպաններ: Ձերբակալվածներից շատերը ենթարկվեցին բռնություն և վատ վերաբերմունքի: Ոստիկանությունն ուժի կիրառմամբ ցրեց խաղաղ ցույցերը, կալանավորեց յոթ հարյուրից ավելի ցուցարար և ձերբակալեց նրանցից գրեթե հարյուր հիսունին՝ ենթարկելով նրանց վարչական պատասխանատվության: Այս իրադարձություններին հանգեցրել է մարտի սկզբից Բելառուսի իշխանությունների կողմից ձեռնարկվող հետապնդումների շարանը, որի նպատակն էր ճնշել հանրային դժգոհության զանգվածային արտահայտումը: 2017 թվականի գարնանը կալանավորված անձանց ընդհանուր թիվը գերազանցել է հազարը:

Նույն օրը՝ մարտի 25-ին՝ նախատեսված խաղաղ ցույցի մեկնարկից մոտ մեկ ժամ առաջ, զանգվածային անկարգությունները կանխող ոստիկանության աշխատակիցները շուրջկալ են իրականացրել «Վիասնա» իրավապաշտպան կենտրոնի գրասենյակներում և կալանավորել ընդհանուր առմամբ 57 բելառուս և օտարերկրյա իրավապաշտպանների, կամավորների և լրագրողների: Նրանք հավաքվել էին խաղաղ հավաքների մշտադիտարկման վերաբերյալ դասընթացի մասնակցելու նպատակով և մտադիր էին դիտարկել Մինսկի ցույցերը: Բոլորին կալանավորվեցին առանց որևէ մեղադրանք առաջադրելու, ուժի գործադրմամբ նստեցրին ավտոբուսներ և տեղափոխեցին ոստիկանության բաժին, որտեղ նրանց պահեցին երկուս ու կես ժամ նախքան ազատ արձակելը: Ակնհայտ է, որ «Վիասնա» իրավապաշտպան կենտրոնի գրասենյակների շուրջկալի և քաղաքացիական դիտորդների կալանավորման նպատակն էր ահաբեկել նրանց և կանխարգելել նրանց կողմից հավաքները դիտարկելու և հնարավոր խախտումները փաստաթղթավորելու հնարավորությունը:

Ցույցերին նախորդող ժամանակահատվածում՝ մարտի 22-24-ը, Բելառուսի անվտանգության ծառայությունները (ԿԳԲ) կալանավորել են երեսունից ավելի մարդ ենթադրաբար զանգվածային անկարգություններ կազմակերպելու և ապօրինի զինված խմբավորումների մաս կազմելու կեղծ մեղադրանքներով: 2017 թվականի հուլիսին Մինսկում կայացած ԵԱՀԿ-ի ԽՎ-ի նստաշրջանին նախորդող օրը բոլոր կալանավորվածներն ազատ են արձակվել, և



զանգվածային անկարգությունների նախապատրաստման մասին քրեական գործը կարճվել է: Մակայն ապօրինի զինված խմբավորում կազմելու մեղադրանքները չեն կարճվել:

2017 թվականի գարնանն արձանագրված զանգվածային ձերբակալությունները, ոստիկանության աշխատակիցների դաժանությունները և քաղաքականացված դատավարությունները շատ նման են 2010 թվականի դեկտեմբերին արձանագրված ճնշումներին, որոնք հանգեցրեցին 2011 թվականին ԵԱՀԿ-ի «Մոսկովյան մեխանիզմի» զեկույցի պահանջների վկայակոչմանը և 2012 թվականին Բելառուսի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի նշանակմանը: ՄԱԿ-ի զեկուցողի խոսքով՝ «Բելառուսի կառավարության կողմից այլախոհ հայացքների արտահայտման արգելքի թվացյալ թուլացումից ընդամենը մի քանի ամիս անց սխալ ծրագրված սոցիալական միջոցի դեմ բողոքի դուրս եկած հազարավոր խաղաղ ցուցարարները ենթարկվեցին համընդհանուր բռնի հետապնդումների մի նոր ալիքի...: Բելառուսը վերսկսեց իրենց հիմնական քաղաքացիական իրավունքներն իրացնող անձանց լռեցնելու իր գործելակերպը»: Այս գործելակերպը, թերևս, անցել է մի ամբողջական շրջափուլ:

### **Առաջարկություններ**

Բելառուսում ապօրինությունների և մարդու իրավունքների պարբերական խախտումների կրկնվող այս գործելակերպին վերջ դնելու համար՝ ԵԱՀԿ ԽՎ-ին, ԵԱՀԿ քաղաքական մարմիններին և հաստատություններին, ԵԱՀԿ մասնակից պետություններին և ավելի լայն իմաստով միջազգային հանրությանը ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1. Միջազգային հանրությունը պետք է հետևողականորեն ներկայացնի Բելառուսում օրենքի գերակայության սկզբունքի պահպանման և մարդու իրավունքների պաշտպանության պահանջը: Միջազգային կազմակերպությունները պետք է մանրագնի հսկողություն և կանոնավոր մշտադիտարկում իրականացնեն Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի նկատմամբ: Միջազգային հանրությունը պետք է կանոնավոր կերպով գնահատի Բելառուսի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը և 2010 թվականի ճնշումներից հետո միջազգային կառույցների, օրինակ՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և Եվրամիության ընդունած հանձնարարականների և բանաձևերի պահանջների իրականացման գործընթացը: Այդ փաստաթղթերում տեղ գտած վերլուծությունը և եզրակացությունները պետք է իրավական հիմք ծառայեն միջազգային հանրության կողմից Բելառուսի մասով քաղաքականության մշակման համար: Հարկավոր է ընդլայնել և ամրապնդել Բելառուսում տիրող իրավիճակը մշտադիտարկելու համար ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի գործող մշտադիտարկման մեխանիզմները, այդ թվում՝ Բելառուսում գործող ԵԱՀԿ ԽՎ-ի աշխատանքային խումբը: Հարկավոր է պահպանել և ընդլայնել Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի լիազորությունը:
2. Հաշվի առնելով Բելառուսում վերջերս արձանագրված իրադարձությունների և 2010-2011թթ. իրադարձությունների նմանությունը՝ ԵԱՀԿ մասնակից

պետությունները պետք է հետևողական լինեն Բելառուսի մասով «Մոսկովյան մեխանիզմ» զեկույցի դրույթների կիրառմանը և դիտարկեն այս գործընթացը մասով նոր զեկուցող նշանակելու հարցը: Հարցը կարող է «փակված» համարվել միայն այն ժամանակ, երբ Բելառուսում զգալի առաջընթաց գրանցի 2011 թվականի «Մոսկովյան մեխանիզմ» զեկույցում ներկայացված հանձնարարականները կատարելու գործում:

3. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը պետք է մշտադիտարկի իրավապաշտպանների, լրագրողների, ինչպես նաև խաղաղ ցույցերին մասնակցելու կամ դրանք մշտադիտարկելու և դրանց մասին զեկույցներ պատրաստելու մեղադրանքով կալանավորված անձանց դատավարությունները:
4. Բելառուսի իշխանությունների հետ երկխոսության, այդ թվում՝ 2017 թվականի միջնաժամկետ գնահատման ընթացքում միջազգային հանրությունը պետք է առավելագույնս օգտվի Բելառուսի «Համընդհանուր պարբերական վերանայման» գործընթացի երկրորդ փուլում ստացված արդյունքներից:
5. Բելառուսի հետ միջազգային համագործակցության և Բելառուսին աջակցության բոլոր ծրագրերը, օրինակ՝ ԵՄ տնտեսական արդիականացման ծրագրերը կամ ՎԶԵԲ-ի և ԱՄՀ-ի ֆինանսական աջակցության ծրագրերը որպես հիմնական պայման պետք է ներառեն մարդու իրավունքների պաշտպանությունը և քաղաքացիական հասարակության՝ որպես լիարժեք մասնակցի ներգրավումը:
6. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և այլ միջկառավարական կազմակերպությունների համագործակցության ծրագրում պետք է ներառել հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված հստակ գործողություններ, այլ ոչ թե վստահել Բելառուսի կառավարության կողմից խթանվող «ընտրողական» մոտեցմանը, որի միջոցով Բելառուսի կառավարությունն ընտրում է այնպիսի խնդիրներ, որոնց մասով կարող է համագործակցել համեմատաբար հեշտությամբ:
7. Բելառուսի կառավարությանը պետք է ներկայացնել հետևյալ նվազագույն պահանջները.
  - ապահովել բոլոր նախկին քաղբանտարկյալների լիակատար արդարացումը և վերացնել նրանց նկատմամբ կիրառվող բոլոր սահմանափակումները,
  - անմիջապես և անվերապահորեն ազատ արձակել քաղբանտարկյալներ Միխաիլ Ժամչուժնուն և Դմիտրի Պալիենկային,
  - կարճել 2017 թվականի մարտ-ապրիլ ամիսներին բողոքի ցույցերին մասնակցելու մեղադրանքով կալանավորված անձանց նկատմամբ հարուցված քաղաքականացված քրեական գործերը և նրանց առաջադրված բոլոր մեղադրանքները,
  - գործել ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների մասին հռչակագրի» դրույթներին համապատասխան և վերացնել իրավապաշտպանների նկատմամբ հետապնդումների բոլոր դրսևորումները, այդ թվում՝ կանխարգելիչ կամայական կալանքը և ճնշումների գործադրման այլ միջոցները,
  - կատարել Բելառուսից ստացված անհատական բողոքների մասով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի և ՄԱԿ-ի այլ պայմանագրային մարմինների ընդունած որոշումների պահանջները,

- վերացնել բելառուս իրավապաշտպան Ելենա Տոնկաչրայի նկատմամբ կիրառված երկիր մուտք գործելու արգելքը և անվտանգ պայմաններ ապահովել քաղաքական հետապնդումների պատճառով իրենց հայրենիքից հեռացած անձանց վերադարձի համար,
- ուժը կորցրած ճանաչել Քրեական օրենսգրքի 193.1-րդ հոդվածը, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում չգրանցված հասարակական կազմակերպություններին անդամակցելու համար, ինչպես նաև արգելվում է չգրանցված ՀԿ-ների անունից գործունեություն ծավալելը: Բացի այդ, փոփոխություններ կատարել «Հասարակական միավորումների մասին» օրենքում և ՀԿ-ների գործունեությունը կարգավորող այլ օրենքներում՝ ապահովելու, որպեսզի դրանցով անհարկի չսահմանափակվի միավորումների ազատությունը: Գրանցել «Վիասնա» իրավապաշտպան կենտրոնը և գրանցման դիմում ներկայացրած այլ ՀԿ-ները և գործնականում ապահովել, որպեսզի տեղական ՀԿ-ները կարողանան գրանցվել և գործունեություն ծավալել առանց անհարկի միջամտության,
- դադարեցնել անկախ լրագրողների, այդ թվում՝ օտարերկրյա լրատվամիջոցներում աշխատող լրագրողների և բլոգերների հետապնդումները, զերծ մնալ նրանց մասնագիտական գործունեությունը խոչընդոտելուց, ուժը կորցրած ճանաչել լրատվամիջոցներին և համացանցին առնչվող սահմանափակող օրենքները, դադարեցնել ինտերնետային կայքերը որպես գրաքննության դրսևորում արգելափակելու գործելակերպը,
- դադարեցնել փաստաբանների հետապնդումները, չեղյալ համարել կառավարությունը քննադատելու համար փաստաբանին փաստաբանական գործունեության իրավունքից զրկելու մասին որոշումները և ուժը կորցրած ճանաչել փաստաբանների միությունների լիազորությունները սահմանափակող օրենքները,
- ուժը կորցրած ճանաչել քաղաքացիական հասարակության կամ քաղաքական գործունեությանը մասնակցող ուսանողների հետ հաշվեհարդար տեսնելու համար նրանց համալսարանից հեռացնելու մասին որոշումները և զերծ մնալ հետագայում նման պատճառներով ուսանողներին հեռացնելուց,
- փոփոխություններ կատարել «Զանգվածային հավաքների մասին» օրենքում, այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար՝ մասնավորապես ապահովելով, որպեսզի ցանկացած սահմանափակում լինի համաչափ և անհարկի խոչընդոտներ չստեղծի հավաքների ազատության իրավունքի իրացման համար: Դադարեցնել չարտոնված զանգվածային հավաքների մասնակիցներին կամայական կալանավորելու և նրանց նկատմամբ մեծ տուգանքներ նշանակելու գործելակերպը,
- չեղյալ համարել ընտրությունները բոյկոտելու կոչերն արգելող և նման կոչերի համար պատժամիջոցներ նախատեսող օրենքները,
- ներկայացնել մահապատժի դատավճիռների կատարումը կասեցնելու մասին օրենք,

- ապահովել, որպեսզի 1999-2000թթ. բռնի անհետացման դեպքերով իրականացվի անկողմնակալ և արդյունավետ քննություն, և մեղավորները պատասխանատվության ենթարկվեն,
  - Բելառուսում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին և թեմատիկ հարցերով ՄԱԿ-ի զեկուցողներին հրավիրել այցի Բելառուս,
  - թույլ տալ վերաբացել Մինսկում ԵԱՀԿ-ի ներկայացուցչության գրասենյակը՝ լայն լիազորություններով, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության վիճակը մշտադիտարկելու ոլորտում:
8. ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից 2010-2017 թվականներին ընդունված բանաձևերից և փաստաթղթերից բխող այս պահանջների կատարումը պետք է հիմք ընդունվի այլ երկրների կառավարությունների և միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից Բելառուսի նկատմամբ քաղաքականություն մշակելու և Բելառուսի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու, դրանք վերացնելու կամ ընդլայնելու, Բելառուսի հետ տնտեսական համագործակցություն հաստատելու կամ Բելառուսին տնտեսական աջակցություն տրամադրելու շուրջ իրազեկ որոշումներ կայացնելու համար: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի այս հրատապ խնդիրները հաջողությամբ լուծելուց անմիջապես հետո կարելի է և պետք է անդրադառնալ համակարգային խնդիրներին, օրինակ՝ դատական համակարգի անկախություն, խոշտանգումների կանխարգելում, մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող Բելառուսի օրենսդրության համապատասխանեցում միջազգային չափանիշներին և ազատ ու արդար ընտրություններ անցկացնելը:
  9. Եվրամիությունը պետք է ընդունի և հրապարակի մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առաջընթացը ներկայացնելու համար Բելառուսի իշխանություններից ակնկալվող նվազագույն միջոցառումների ծրագիրը և համատեղ համաձայնեցնի նման ծրագրի իրականացման ճանապարհային քարտեզի մշակումը:
  10. Բելառուսի հետ մարդու իրավունքների շուրջ երկխոսության շրջանակներում միջազգային հանրությունը պետք է որպես հիմնական դերակատար ճանաչի Բելառուսի անկախ քաղաքացիական հասարակությանը և այս գործընթացում որպես կառավարությանը հավասար գործընկեր ներգրավի Բելառուսի իրավապաշտպանների հանրության ներկայացուցիչներին: